

ԱՌԱՋԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐ ԻՆՎԵՐՏ ԿԵՐԱՏՈՊԼԱՍՏԻԿԱՅԻ ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հովհաննիսյան Օ.Գ., Գունդորովա Ռ.Ա., Կիմ Ա.Է.

Մոսկվայի Յ. Յեվմոյցի անվան աչքի հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ, Մոսկվա, ՌԴ

Կուրության և թույլ տեսողության կարևորագույն պատճառներից են եղջրաթաղանթի փասվածքներն ու հիվանդությունները: Մենք անդրադառնում ենք եղջրաթաղանթի ամբողջականության ստերիլ կամ ասեպտիկ խանգարման հիմնախնդիրին:

Ներկայումս եղջրաթաղանթի քսերոգենային և նեյրոտրոֆիկ խոցով հիվանդների կոնսերվատիվ և վիրահատական բուժման արդյունավետությունը բավականին ցածր է: Ռեգիոնալ ախտաբանական գործընթացը ռեցիդիվման հակում ունի, որն էլ պատճառ է հանդիսանում եղջրաթաղանթի պերֆորացիային, ինչին էլ հաջորդում է աչքի անատոմիական և ֆունկցիոնալ «մահը»:

Այս մեթոդի հիմքում ընկած է դոնորների եղջրաթաղանթի հետին շերտերի շերտավոր փոխպատվաստուկի ֆիքսացիան՝ ռեցիպիենտի եղջրաթաղանթի ձևավորված տեղում:

Տվյալ հանգամանքը մեզ հանգեցրել է կերատոպլաստիկայի նոր մոդիֆիկացիայի գաղափարի մշակմանը՝ եղջրաթաղանթի քայքայման պրոցեսների բուժման ժամանակ և ախտակրկնման կանխարգելման համար:

Գաղափարի հիմքում ընկած է դեսցեմենտի բջջաթաղանթի առանձնահատկությունները: Հայտնի է, որ դեսցեմենտի բջջաթաղանթը՝ եղջրաթաղանթի ամենամուր կառուցվածքն է, մաքսիմալ ռեզիստենտ է դեպի մեխանիկական և ֆերմենտատիվ փասվածքները:

Մեր կողմից մշակվել է (ունենք առաջնության տեղեկանք) և փորձերում փորձարկվել է առաջնային շերտավոր կերատոպլաստիկայի նոր մոդիֆիկացիա՝ առաջնային շերտավոր ինվերտային կերատոպլաստիկա, որը ըստ էության հանդիսանում է շերտավոր դոնորային տրանսպլանտանտի եղջրաթաղանթի հետին պատի ֆիկսացիա, ներառված դեսցեմենտի բջջաթաղանթը, ռեցիպիենտի եղջրաթաղանթի ձևավորված հունում (դրսի դեսցեմենտի թաղանթ): 20 «շինշիլա» ցեղատեսակի ճագարների վրա մեր կողմից փորձարկվել է շերտավոր ինվերտ կերատոպլաստիկայի վիրահատության տեխնիկան: Ուսումնասիրության ժամանակը մեկ շաբաթից մինչև 3 ամիս էր (համապատասխան հիստոլոգիական հետազոտության համար նախատեսած նյութերի հավաքման ժամանակի), որը թույլ է տվել դիսամիկայում ուսումնասիրել կերատոտրանսպլանտանտի սերտաճեցման գործընթացը:

Մեր կողմից ստացված տվյալների հիմքի վրա կարելի է եզրակացնել այն մասին, որ դոնորային դեսցեմենտի թաղանթը ընդունակ է գոյություն ունենալ եղջրաթաղանթի առջնային շերտերում. ոչ դեսցեմենտի թաղանթը, ոչ էլ էնդոթելը Էպիթելների աճի համար արգելք չեն հանդիսանում: Առաջնային շերտավոր ինվերտային կերատոպլաստիկայի փորձարարական ապրոբացիայի արդյունքները մեզ թույլ են տալիս անցնել տվյալ մեթոդիկայի սահմանափակ կլինիկական փորձարկման: